ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈ՞ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻ՞ՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Ես իմաստութիւն բնակեցայ ի խորագիտութեան. զխորհուրդս և զգիտութիւն կոչեցի յիս»:

ԱՌԱԿՔ Ը 12

Օրհնութեամբ և հրամանաւ երջանկայիշատակ Յակոբ Դ Ջուղայեցի հայոց հայրապետի, ուղիղ երեք դար առաջ, 11 մարտ 1666-ին, լոյս տեսաւ առաջին հայերէն տպագրութիւնը Աստուածաշունչ մատեանին Ամստերդամ քաղաքի մէջ, Ս. Էջմիածնի միաբան Ոսկան Երևանցի վարդապետի տքնաջան աշխատանքով:

Հազար վեց հարիւր վաթսուն և վեց տարեթիւը հայ մշակոյթի պատմութեան մեծագոյն հանգրուաններէն մին կը հանդիսանայ:

Ս. Գրքի տպագրութիւնը երեք հարիւր տարիներ առաջ, հայ մշակոյթի մնայուն և փայլուն իրագործումներէն մին է, իբրև հոգևոր, գրական և գիտական յաղթանակը Հայաստանեայց Եկեղեցիին ու ժողովուրդին: Իսկ եթէ յիշենք, թէ տպագրութիւնը կատարուած է մեր պատմութեան ամենածանր շրջաններէն մէկուն մէջ, Մայր Երկրէն շատ հեռու, անյաղթահարելի ծանր պայմաններու տակ, անյոգնաբեկ եռանդովը և զարմանալի նուիրումովը լուսամիտ վարդապետի մը, այդ յաղթանակը պէտք է գնահատենք իբրև ճշմարտապէս հերոսական գործ:

Ս. Սահակ Հայրապետի տեսիլքով ոգեշնչուած հայրապետ մը և Ս. Մեսրոպ Մաշտոցի հանճարէն ճառագայթ մը իր մէջ կրող վարդապետ մը նոր արև ծաթեցուցին տասնեօթներորդ դարու հայոց մթագնած երկնակամարին վրայ և Աստուծոյ խօսքին լոյսը լայն ափոեցին հայ հոգիներէն ներս:

Յակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոս և Ոսկան վարդապետ Երևանցին, իրենց կոթողական գործով, կը դաւուին մեր ժողովուրդին լուսաւորիչներու շարքին և յաւէտ պիտի յիշուին երախտագիտութեամբ և օրհնութեամբ:

Մենք այսօր երջանիկ ենք, որ հայ ժողովուրդը, վերջին երեք հարիւր տարիներու բազում ողբերգութիւններէ ու նահատակություններէ յետոյ հրաշալիօրէն վերածնած, թէ՛ Մայր Հայրենիքի և թէ՛ Սփիւռքի մէջ, կը պատրաստուի տօնախմբել Աստուածաշունչի առաջին տպագրութեան յոբելեանը:

Անցեալ տարի, մեր Եկեղեցին և մեր ամբողջ ժողովուրդը ոգեկոչեցին մեծ եղեռնի երկու միլիոն մեր զոհերու յիշատակը, աքանչելի գիտակցութեամբ և համազգային միասնութեամբ:

Նոյն գիտակցութեամբ, նոյն միասնութեամբ, այլ և ցնծութեամբ ու ազնիւ հպարտութեամբ, արժան է տօնել և փառաբանել հայ ժողովուրդի հոգևոր նուաճումներէն մին հանդիսացող Ս. Գրքի առաջին տպագրութիւնը:

Մեր օրերուն, ժողովուրդները մանաւանդ իրենց մշակոյթի արժեքներով են որ կը ճանաչուին ու կը գնահատուին իբրև այդպիսիներ: Ժողովուրդ մը իր մշակոյթով է որ կը հանդիսանայ վաւերական ազգութիւն:

Այս իմաստով, և մանաւանդ այս իմաստով, հայ ժողովուրդը անտարակոյս թէ աշխարհի ամենավաւերական ազգութիւններէն մին է:

Յանուն Հայաստանեայց Եկեղեցւոյ, կ'առաջադրենք և կը հրահանգենք, որ՝

ա) Այս տարի, հոկտեմբեր 8-ին, Սրբոց Թարգմանչաց տօնախմբութիւնը և «Հայ մշակոյթի օր»-ուան հանդիսութիւնները նուիրուին Աստուածաշունչի հայերէն առաջին տպագրութեան երեքհարիւրամեակին:

բ) Հայոց բոլոր եկեղեցիներու մէջ կատարուին հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօններ՝ ի յիշատակ Յակոբ Դ. Ջուղայեցի հայրապետի և Ոսկան Երևանցի վարդապետի լուսաբնակ հոգիներուն, նաև կենդանի խօսքով պանծացնելով անոնց գործն ու վաստակը:

գ) Ազգային-եկեղեցական իշխանութիւնները կազմակերպեն հանդիսաւոր նիստեր և հրապարակեն գրական ուսումնասիրական գործեր, նպատակ ունենալով ներկայացնելու մեր ժողովուրդին և քոյր ժողովուրդներուն, Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան և տպագրութեան կրօնական, մշակութային և գիտական կարևորութիւնը: Այս առիթներով փափաքելի է ապահովել նաև այլազգի հեղինակաւոր հոգևորականներու և գիտնականներու աշխատակցութիւնը:

դ) Ակնկալելի է, որ հայ մամուլը լայնօրէն արձագանգէ այս համազգային յոբելեանին և ծրագրուած կերպով անոր նուիրէ իր էջերը, առաւել արծարծելու և ամրապնդելու համար մեր ազգային մշակոյթի արժեքներու զգացումը հայ նոր սերունդներու գիտակցութեան մէջ:

Մայր Աթոռը խանդավառ հոգիով պիտի տօնէ Ս. Գրքի հայերէն տպագրութեան երեքհարիւրամեակը և յարգանքի ու աշխատանքի իր համեստ բաժինը պիտի բերէ՝ հրապարակելով հոչակաւոր «Մուղնու Աւետարան»-ը լուսատիպ տպագրութեամբ, գրաբար Նոր Կտակարան և «Էջմիածին» ամսագրի սեպտեմբեր—հոկտեմբեր թիւը նուիրելով այս մեծ հոբելեանին:

Թող Աստուած յաւէտ լոյսի մէջ փառաւորէ Յակոբ Զուղայեցի Հայրապետի և Ոսկան վարդապետի յիշատակը:

Թող Աստուած օրհնէ հայ հոգևոր մշակոյթի բազմադարեան գանձարանը:

Թող Աստուած յաւէտ պայծառ պահէ հայ ժողովուրդի շինարար ու ստեղծագործ հանճարը:

«Եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր. զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ» (Սաղմ. ՁԹ 17):

Ամէն:

Տուաւ կոնդակս ի 11-ն մարտի
1966 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԵ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ԵԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ